ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/259

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 04.10.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16435-2021 գրությամբ «Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 01.10.2021թ. թիվ ՍՄ//39002-2021 գրության հիման վրա, 08.10.2021թ.

թիվ 26/26-1/16435-2021 գրությամբ նախաձեռնել է «Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ՆԳ-2021/259 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը «ՎԻԿՏՈՐՅԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման և պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման միաժամանակյա առկայության դեպքում նոր կարելի է փաստել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական հիմքերի առկայության մասին: Ի դեպ նշված իրավակարգավորումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու երկկողմ շահերը՝ պատվիրատուի և մասնակցի և դրանց համադրության համատեքստում նոր միայն հնարավոր է արձանագրել կիրառելի իրավական նորմերի մասին:

Ուստի գտնում եմ, որ սույն գործով պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումը.

Արդյո՞ք «ՎԻԿՏՈՐՅԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը խախտել է կողմերի միջև 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» պայմանագրի (այսուհետ նաև պայմանագիր) շրջանակում Ընկերությունը պետք է մատակարարեր տեխնիկական բնութագրով-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ ի թիվս այլնի նաև գնման հայտը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել

աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Վերոհիշալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջելու կատարել իր պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, հակառակ դեպքում պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Ծառայությունների մատուցումը իր բնույթով հանդիսանում է պարտավորական իրավահարաբերություն, որի պարագայում կողմերից մեկը հանդես է գալիս որպես պարտատեր, իսկ մյուս կողմը՝ պարտապան: Ուստի պարտատիրոջ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը:

Նշված հանգամանքը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» պայմանագրի ուժով Ընկերությանը մատակարարման ենթակա ապրանքները՝ պարտավորության ուժով՝ ի թիվս այլնի, պետք է մատակարարվեին գնման հայտը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» պայմանագրի 2.1.1. կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե

մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Նշվածի համատեքստում պետք է փաստել, որ գնորդի մոտ մատակարարման ենթակա ապրանքներից հրաժարվելու իրավունքը ծագում է այն դեպքում, երբ մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Սույն դեպքում Պատվիրատուի պահեստապետի 10.09.2021 թվականին կազմված զեկուցագրով մատնանշել է, որ 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը մասնակցի կողմից չի կատարվում, որի արդյունքում ապրանքները սպառման եզրին է, որի արդյունքում Պատվիրատուի կողմից կողմերի միջև 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» պայմանագիրը միակողմանի լուծվել է, նույն պայմանագրի 2.1.1. կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն: Պատվիրատուն սխալ կիրառելով վերոհիշյալ իրավական ակտերը, սխալ արձանագրեց այն հանգամանքը, որ իրավասու էր մինչ պայմանագրով նախատեսված ժամկետը պահանջել ապրանքների մատակարարում և արդյունքում միակողմանի լուծեր այն: Պայմանագրի 2.1.1. կետի համաձայն Պատվիրատուն կարող է այն միակողմանի լուծել, եթե խախտվել են մատակարարման ժամկետները 5 օրից ավելի, ուստի Պատվիրատուի համար առաջնային պետք է համարվեր պարտավորության ժամկետի արձանագրման պահը, կետանցի օրն ու այն 5 օրով խախտելը, որից հետո կկարողանար միակողմանի լուծել պայմանագիրը: Սույն դեպքում Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը պետք է հաշվարկել մասնակցին ներկայացված գնման հայտով նախատեսված ժամկետը, որով պայմանավորված Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ և սխալ արձանագրելով պարտավորության խախտման փաստը՝ միակողմանի լուժել է պայմանագիրը: Սույն գործի փաստերի շրջանակում առկա չէ մասնակցին տրված գնման հայտ, որով պայմանավորված 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է կատարվեր մատակարարումները, եթե ենթադրաբար ընդունենք, որ կցված հայտերն է Պատվիրատուն ներկայացրել, որպես գնման հայտի ներկայացման հիմնավորում, ապա հայտնեմ, որ դրանք չեն կարող հանդիսանալ վերաբերելի ապացույցներ, քանզի դրանցով չի հիմնավորվում թե գնման հայտը որ պայմանագրի շրջանակում է ներկայացված և ում է հասցեագրված, ուստի պետք է փաստել, որ գնման հայտի բացակայությամբ պայմանավորված մասնակցի մոտ չի ծագում ապրանքների մատակարարման պարտավորություն, իսկ ընդհանուր կարգով ապրանքները կարող են մատակարարվել մինչև 25.12.2021 թվականը, ուստի պարտավորության կետանցի մասով

առկա չէ խախտումներ և Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշումները փաստարկված չեն և իրավազուրկ են: Ընդ որում պետք է փաստել նաև, որ պայմանագրի Հավելված 1-ը, որով սահմանված են ապրանքների մատակարարման ժամկետներ թվագրված չէ, ուստի անհասկանալի է թե երբ է այն կնքվել և ուժի մեջ մինչ այս մտել է թե ոչ, ուստի դրանով պայմանավորված գտնում եմ, որ այն թույլատրելի ապացույց չի կարող հանդիսանալ:

Պատասխանելով պարզաբանման ենթակա հարցադրմանը պետք է փաստել, որ «Վիկտորյա գրուպ» ՍՊ ընկերությունը չի խախտել կողմերի միջև 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Պայմանավորված վերոգրյալով խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Վիկտորյա գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգը, քանզի Ընկերության կողմից չի խախտվել պայմանագրով նախատեսված պարտավորությունը»:

«Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/259 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.10.2021թ. թիվ ՍՄ//39002-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիկտորիա գրուպ» ՍՊԸ-ների միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» ծածկագրով «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Ձորակ» հոգեկան առողջության

խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» ծածկագրով մատակարարման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 5-ի N 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «Վիկտորիա գրուպ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/259 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/259 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/259 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիկտորիա գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի 8-րդ կետի 8.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և

պարտականությունների իրականացումը վերապահվում է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ին:

3. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

2. Գնորդի կողմից 16.08.2021թ. կազմվել է սննդամթերքի մատակարարման հայտ:

3. Պատվիրատուի կողմից 23.08.2021թ. կազմվել է ակտ, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, դիետաբան Ռ.Մկրտչյանս, պահեստապետ՝ Ա. Գասպարյանս, խոհարար Գ.Խաչիկյանս, կազմեցինք սույն ակտը այն մասին, որ «Ձորակ» ՊՈԱԿ-ում որոշ սննդամթերքներ չեն մատակարարվել:

Ս.թ. օգոստոսի 16-ին «Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ին ներկայացված հայտի համաձայն, որի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված ս.թ. օգոստոսի 23-ը, նշված ժամանակահատվածում ապրանքերի մատակարարում չի իրականացվել»:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 27.09.2021թ. թիվ 1 որոշման 2-րդ կետով որոշում է կայացրել սույն թվականի սեպտեմբերի 27-ից միակողմ լուծել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 30.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16435-2021 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության

01.10.2021թ. թիվ ՍՄ//39002-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիկտորիա գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8-րդ կետի 8.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

Գնորդի կողմից 16.08.2021թ. կազմվել է սննդամթերքի մատակարարման հայտ:

Պատվիրատուի կողմից 23.08.2021թ. կազմվել է ակտ, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, դիետաբան Ռ. Մկրտչյանս, պահեստապետ՝ Ա. Գասպարյանս, խոհարար Գ.Խաչիկյանս, կազմեցինք սույն ակտը այն մասին, որ «Ձորակ» ՊՈԱԿ-ում որոշ սննդամթերքներ չեն մատակարարվել:

Ս.թ. օգոստոսի 16-ին «Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ին ներկայացված հայտի համաձայն, որի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված ս.թ. օգոստոսի 23-ը, նշված ժամանակահատվածում ապրանքերի մատակարարում չի իրականացվել»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 27.09.2021թ. թիվ 1 որոշման 2-րդ կետով որոշում է կայացրել սույն թվականի սեպտեմբերի 27-ից միակողմ լուծել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 30.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 16.08.2021թ. կազմել է հայտ՝ հայտում նշելով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ 23.08.2021թ.:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ***որպես ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել*** ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ ***մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն Պայմանագրով սահմանելով մեկ այլ վերջնաժամկետ, այն է՝ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ., իսկ ներկայացված հայտով

<u>սահմանելով վերջնաժամկետ մինչև 23.08.2021թ., այսինքն՝ սահմանելով հակասական ժամկետներ, Վաճառողին գցել է մոլորության մեջ:</u>

Միևնույն ժամանակ անդրադառնալով Պայմանագրի 8-րդ կետի 8.13 ենթակետին, այն է՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով, հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուի կողմից 01.10.2021թ. թիվ ՍՄ//39002-2021 գրությամբ ներկայացված փաստաթղթերում առկա չէ 29.12.2020թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Ձ-ՎԳ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի շրջանակներում կնքված համաձայնագիր, որով կհավաստվեր Պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցներ հատկացված լինելը, որպիսի պայմաններում միայն Ընկերությունը պարտավոր կլիներ մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ հայտով սահմանված ժամկետը չի բխում Պայմանագրով սահմանված ժամկետից, ուստի նման պայմաններում հայտով սահմանված ժամկետում Պայմանագրով նախատեսված ապրանքի չմատակարարելը չէր կարող հիմք հանդիսանալ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար, հետևաբար հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված որևէ դրույթի խախտում:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 08.10.2021թ. թիվ 26/26-1/16435-2021 գրությամբ «Վիկտորյա գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**